

07 սեպտեմբեր 2021 թ.

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության /6 ժամ/, տեխնոլոգիայի /3 ժամ/, դասվար /18 ժամ/, կերպարվեստի /3 ժամ/ ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 1-ի) և բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 2-ի):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):

2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից:

3. Անձնագրի պատճենը:

4. Ինքնակենսագրություն (Ձև 4):

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):

6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի:

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զին-գրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2021թ.-ի սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰-15⁰⁰, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021թ.-ի սեպտեմբերի 24-ին, ժամը 14⁰⁰-ին** Սյունիքի մարզի Հր. Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում բան., 2/1 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)61.22.90 կամ (0285)2.47.90 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում բան., 2/1

Հեռ.՝ (աշխ.) (0285) 2 47 90

(բջջ.) (093) 61 22 90